## ՆՈՐ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

### Յունուար ամսուն Հանելուկին ։

Այս տարուանս ապրիլի Բազմավէպին մէջ Յունուար ամսոյն հանելուկին մեկնութիւն մը հրատարակած ատեննիս ծանուցինք որ ուրիշ բանասէր մըն ալ գրած է մեկնութիւն մը և այն ալ կը հրատարակենք. այս բանասէրս է ԱՐՇԱԿ Պ ԱԶԱՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ պարոնն որ յուլիս 27 թուականով մեզի խաւրեց իր մեկնութիւնը ։ Նոյն թղթաբերաւ Օ. ՄԱՏԹԷՈՍ Ացվ. պարոնէն ալ մեկնութիւն մը առինք, նոյն ամսուն 20ին ստորագրուած ։ Երկու բանասէրքն ալ ինչպէս որ նոյն նիւթին վրայ մեկներ են հանելուկը այսինքն ԵՐԿՐԻ, նոյն մէկ ատենի մէջ ալ գտած են մեկնութիւնը, այսինքն Հանելուկը հրատարակուած և նոր կարդացած ատեննին, ինչպէս որ կը ծանուցանեն մեզի իրենց նամակովը ։ Ըստ խնդրոյ գրողացն հոս երկուքինն ալ կը դնենք հաւատարմութեամբ դիմացէ դիմաց, ընթերցողաց թողլով դատաստանը, ջրածագան ոսկիներն ալ՝ տալ կրցողաց, կամ յուսացողաց ։ Ձախ դիու սիւնակս Պ. Արշակինն է, աջ դիւնը Պ. Մատթէոսինն ։

ԱՅՍ հանելուկը ոչ Անգղիոյ ոսկիի վրայ է և ոչ մէկ ուրիշ դժուարագիւտ բանի մը վրայ. հապա ամենուս ամենէն աղէկ ճանչցած գիտցած բանին ԵՐԿՐԻՍ վրայ է. վարը գրած լուծմունքէս յայտնի կ'երևնայ ըսածիս ստուգութիւնը ։ Ուստի նախ հանելուկը ամբողջ կարդանք բանին ինչ ըլլալը բացայայտ հասկցուելու համար, և յետոյ ամէն մէկ մասին մեկնութիւնը զատ զատ տանք ։

ԱՅՍ տարուան Բազմավէպին Յունուարի հանելուկը շատ յարմար սեպելով կ'ըսենք թէ ԵՐԿԻՐ կամ ՀՈՂ է. վասն զի գրեթէ ամէն պարագաներով աղէկ կը պատշաճի անոր. թէ որ ան ալ չէ ալ նէ, պէտք էր որ չինողը իր նպատակը ինչ էր նէ՝ անոր վրայօք քանի մը պարագաներ ալ աւելցըներ, և կամ քանի մը պարագայ պակաս ընէր՝ որ ուրիշ բանի չպատշաճէր. ուստի մեր տուած մեկնութիւնն է այս ։

ԵՍ ինձ եմ Որդի, Հայր, Հաւ և Եղբայր,  
Եւ Կոյս, և Դայեակ, Ամուսին և Մայր.  
Անորդ եմ, և զիս որոնէ աշխարհ.  
Վիշապ եմ անգութ, Արծիւ, Ծառայ չար ։  
Եօթն եմք. և յորժամ լինիմ անձնատուան,  
Ջախոս այլոց սրբել ես եմ բաւական.  
Զիմ ըզկեանս բարձող չիք 'ի մէջ մարդկան,  
Զի ճոխ իմ աւարք միշտ ինձ կեանըս տան ։  
Հող էի և ջուր, և կեամ ես այլովք.  
Մահկանացու եմ որպէս ամէն ոք,  
Բայց ոչ եմ պատեալ մըսով ոսկերօք ։  
Եթէ դու ցանկաս մեծամեծ շահուց,  
Թող զիս ըսպանցէ ոմն 'ի մեռելոց,  
Եւ եղէց ճարակ ազգականաց իմոց ։

Ես Ինչ եմ Որդի, Հայր, Հաւ և Եղբայր, և Կոյս, և Դայեակ, Ամուսին և Մայր ։ Հեղինակին աս տեղ այսչափ իրարու հակառական բաներ դիզելուն մէկ գլխաւոր նպատակը՝ կարդացողին միտքը չփոթել է. բայց ինչ օգուտ որ ամէնքն ալ կարծեմ թէ երկրիս կը յարմարին, թէպէտ մէկ երկու հատը ինծի կը թուի թէ ես աղէկ մը չկրցայ յարմարցընել ։ Ինչպէս՝ Երկիրս իր Որդին է, քանզի Աստուած զանի իրմէն չինեց. աս նոյն պատճառաւ իրեն Հայրն ալ է ։ Հաւն է, քանզի կը կարծուի թէ առաջուց ստեղծուած էր երկիրս ։ Եղբայր է, գուցէ՝ ուրիշ մոլորակաց ։ Կոյս է, քանզի կարգուած չէ մէկուն հետ ։ Իր Դայեակն է, քանզի ինք է իր

Ես Բոլոր հողէ ծնած կամ ելած գոյութիւններս, Ինչ այսինքն բուն կամ ընդհանրական հողին կամ երկրին Որդին եմ, և ընդհանրական երկիրս ինծմէ ելածներուն Հայր, և անոնցմէ ծնածներուն Հաւ, ու միանգամայն ալ բոլոր անոնց՝ որ ինծի պէս տակաւին հող են Եղբայր եմ ։ Կոյս եմ վասն զի կան իմ մէջս անանկ հանքեր կամ երկիրներ՝ որ անարատ կոյս են, և արատաւորութիւն չեն ընդունիր, ինչպէս ոսկի, ադամանդ, և այլն ։ Դայեակ եմ, վասն զի դայեկաբար կը սնուցանեմ բոլոր հողածինները, ինչպէս մարդը, և այլն ։ Ամուսին, վասն զի երկու տեսակ հանք կամ երկիր իրար խառնուելով ուրիշ մը կը ծնանիմ. և Մայր եմ, վասն

հոգը հոգացողը, ինք կուտայ իրեն անձրև, և այլն: Ինք իր Աստուածն է, որովհետև իր տանը հոգը հոգացողը ինք է. ասիկայ կարելի է ուրիշ մտօք ալ բռած ըլլայ: Մայր է, քանզի իր արգանդէն կ'ելլեն բոլոր բուսեղէնները, հանքերը, և այլն և այլն:

Անարգ էմ, և չէս օրհնէ աշխարհ: Ասոր մեկնութիւն պէտք չէ. գիտենք որ աշխարհս բարոյական մտօք անարգ է, և բոլոր մարդիկ զանի կ'օրհնեն:

Վիշապ էմ անգութ, Արծիւ, Ծառայ չար: Ամէն մարդ քիչ մը խորհելով՝ կրնայ երկրիս իբրև վիշապ անխնայ կուլ տուած բաներէն գէթ մէկ քանին գտնել: Արծիւ է, զի արծուի արագութեամբ Ճամբայ կ'ընէ արեգական շուրջը. մէկ ժամուան մէջ 68,000 մղոն Ճամբայ առնելով: Ծառայ չար է, անիծեալ ըլլալովը փուշ ու տատասկ բուսցընելուն, և մարդոցմէ իր ծառայութեանը փոխարէն Ճակտի քրտինք պահանջելուն համար:

Եօթն էմք: Ան ատենի աստղաբաշխութիւնը մինակ եօթը մոլորակ կը Ճանչնար, անոր համար եօթն էմք կ'ըսէ:

Եւ յորժամ լինիմ անձնասպան: Երկիրս պիտի մեռնի, ապա աշխարհս պիտի անցնի, բայց ինչպէ՞ս. — Պետրոս առաքելոյն բառերին պէս. "Այլ եկեսցէ օր Տեառն իբրև գող, յորում երկինք սաստկապաւանցցեն, և բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր և որ 'ի նմա գործք գտանիցին,,: Ասկէ կը հասկցուի որ Աստուծոյ հրամանովը տարերքները իրարմէ քայքայելով պիտի բռնկին և աշխարհս վառեն, ինչպէս որ բնալուծական փորձերով ալ կը տեսնենք որ թթուածինի պէս սաստիկ և ջրածինի պէս ինքնին վառող տարերքներ խիստ մեծ քանակութեամբ կան աշխարհիս ամէն կողմը՝ թէ օդին թէ ջրին և թէ ուրիշ բաներու մէջ: Ուստի որովհետև Առաքեալին խօսքին նայելով՝ երկիրս ինք իրմով այրի լուծուի պիտի, անոր համար կրնանք ըսել թէ անձնասպան պիտի ըլլայ:

Զախտս այլոց սրբել ես եմ բաւական: Ասոր միտքը կարելի է աս ըլլայ, թէ երբոր աշխարհս անցնի՝ ամէն ախտերն ու հիւանդութիւններն ալ, որ մարդոց վրայ կը տիրեն, մէկտեղ պիտի անցնին:

Զիմ գնելոյ բարելից լի 'ի մէջ մարդկան, զի շատ եմ առաւել քան իմ կենաց տան: Ասոր ալ մեկնութիւն չուզեր: Յայտնի է թէ մարդ չկրնար աշխարհս սպաննել, և թէ աշխարհք միշտ բան ուտելու վրայ է:

Հող էի և ջուր, և կեամ ես այլովք: Երկիրս հողէ և ջրէ շինուած է, և կեամ ես այլովք բառն ալ հուրն ու օդն է, հին ատենի փիլիսոփայութեան նայելով:

զի բոլոր ինծմէ ծնածները մայրաբար կը խնամեմ:

Անարգ էմ. վասն զի չեմ գերբնական կամ գերբաղանց էակ մը, ինչպէս հոգի, առաքինութիւն և այլն, այլ լոկ ամնկուն գոյութիւններ. սակայն չէս աշխարհս անոնց ամենէն վեր սեպելով կ'օրհնէ, որ է ոսկին, ադամանդը, արծաթը, և այլն. որ ինծմէ ծնած հողեր են կամ նիւթեղէն:

Վիշապ էմ անգութ. վասն զի ինչ որ ինծի տրուի կամ իմ մէջս թաղուի, անգթաբար վիշապի պէս կը կլլեմ. և արծիւի պէս կը գիշատեմ փտեցընելով՝ կամ կը յափշտակեմ, և ծառայ չար եմ, վասն զի ուզած կերպերնուն կը դարձընեն. կամ ուզածնուն պէս կը գործածեն, որ չըհնազանդելք չեմ կրնար ընել:

Եօթն էմք, այսինքն եօթը մոլորակները որ ամէնքս մէկ տեսակ կամ այլատեսակ հողի կամ երկրի կոչուեր եմք զատ զատ: (Այս այսպէս կը պաշաճի մեկնել, և շատ յարմար կուգայ, և այս էր շինողին ակնարկութիւնը, եթէ ուղիղ է, վասն զի ատկէց 100 տարի առաջ ալ եօթնէն աւելի մոլորակ չկար):

Եւ յորժամ լինիմ անձնասպան, այսինքն երբոր ինծի պէս հող մը՝ որ է մարդ և այլն, զիս մեռցընէ, որ անոր ալ հող ըլլալովը՝ անձնասպանութիւն կը սեպուի ըրածը, այսինքն հանքերը հանէ, երկիրը հերկէ արօրադրէ, և այլն, ան ատենը անոնց մարմնական կարիքները լեցընելուս համար զախտս այլոց սրբել ես եմ բաւական. ինչպէս գեղորայք ալ:

Զիմ գնելոյ բարելից լի 'ի մէջ մարդկան, այսինքն ուր երթամ՝ ինչ ըլլամ տակաւին հող կամ երկիր եմ. զի շատ եմ առաւել քան իմ կենաց տան, որչափ որ յեղափոխուիմ, այնչափ կ'ուժովնամ. կը պարարտանամ, կը զատուիմ, ինչպէս հողը, ոսկին, և այլն:

Հող էի և ջուր, ինչպէս որ հիմայ ալ եմ, և կեամ ես այլովք, այսինքն միացած երկու տարերքներով, որ են հուր և օդ, վասն զի մինչև որ հուրը իր ջերմութեամբը՝ և օդը իր հնչելովը զիս չբռնեն չպնդացընեն ես չեմ կրնար կենալ:

Մահկանացու եմ որպէս ամէն ոք : Ճշմարիտ է :
Բայց ոչ եմ պատեալ մսով ոսկերօք : Անանկ է :

Եթէ դու ցանկաս մեծամեծ շահոյ, ըսել է թէ ե-թէ դու ցանկաս նորոյ երկնից և նորոյ երկրի :
Թող զիս ազատէ ած 'ի մեռելոյ : Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ մեռաւ և յարութիւն առաւ, և վեր-ջին օրը նորէն պիտի գայ կենդանիները և մեռեալ-ները դատելու, և աշխարհս այրելով սպաննելու :
Եւ եղէց ճարակ ազգակցաց իմոց : Վերը հող էի և կեամ ես այլոց ըսաւ նէ, աս ան այլոցն է, որ հոս ազգակիցք կը կոչէ, այսինքն հուրն ու օդը, որոնցմով պիտի այրի աշխարհս, որոնց որ ճարակ պիտի ըլլայ :

Մահկանացու եմ որպէս ամէն ոք, չեմ անմահ էակ մը, հոգի, միտք, հրեշտակ, և այլն. և ոչ ալ մսով ոսկերօք պատած եմ մարդու կամ կենդանիի պէս, զի կենդանի ալ չեմ :

Եթէ դու ցանկաս մեծամեծ շահոյ, Թող զիս ազատէ ած 'ի մեռելոյ, այսինքն 'ի մահկանացուաց, (որ ուշ կամ կանուխ մեռած է) զիս թող բանեցընէ, գործածէ. հերկէ, վարուցան ընէ, զի եղէց ճարակ ազ-գակցաց իմոց, այսինքն բոլոր ուրիշ հողածին կամ երկրածիններուն, որ ինծմէ ելած կամ իմիններէս յառաջ եկած ըլլալովնին՝ ինծի հետ ազգակից են :

---

## ԽԵԼԱՑԻ ԽՕՍՔԵՐ
## ՈՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

### Ուրիշը ծաղր ընողը ինքն ալ ծաղր կ'ըլլայ :

ՄԱԼԹԱՅԻ ասպետներէն մէկ քանին օր մը նստեր իրարու հետ կը խօսէին թէ արդեօք ինչպէս պիտի կարենան իրենց թշնամեաց վաթսուն հազար զօրքին դէմ դնել : Ու որովհետեւ մէ-ջերնին տկար ու խեղճ մարդ մըն ալ կար Սամփսոն անունով, ասպետներէն մէկը դարձաւ, " Բարեկամք, ըսաւ, ինչու այդչափ շփոթեր ենք . մինթէ մեր մէջն ալ Սամփսոն մը չկա՞յ որ ինքը միայն թշնամեաց զօրքը տակն ու վրայ ընէ ,, : Երբոր աս ծաղրաբանութեան վրայ ամէնքը բարձրաձայն խնտալ սկը-սան, Սամփսոն " Իրաւունք ունիս, ը-սաւ, Պարոն . բայց աս քաջութիւնը ընելու համար պէտք է որ ձեզմէ մէկին ծնօտը ձեռքս ունենամ ,, :

### Մարդէս դատապարտն :

ԲԱՆԱՍՏԵՂԾ մը իր գրած ոտանա-ւորները իր մէկ բարեկամին զիմաց եր-կայն բարակ կարդալէն ետքը, դարձաւ հարցուց թէ արդեօք ո՞ր կտորները ա-ւելի աղէկ երևցան իրեն : — Չկարդա-ցածներդ, ըսաւ, ու թողուց գնաց :

### Ծոյլ ծառայ :

ԾՈՅԼ տղուն մէկը ամէն առտու սովորութիւն ըրած էր անկողնէն ուշ ելլել : Հայրը զինքը խրատելու համար, " Մարդ մը առտուանց կանուխ քսակ մը ոսկի գտեր է, ըսաւ, ճամբուն վրայ . կը տեսնե՞ս կանուխ ելլելուն օ-գուտը ,, : Տղան, " Ըսել է թէ, ը-սաւ, աս ստակը կորսնցընողը աւելի կանուխ ելեր է . ուրեմն տեսէք թէ կանուխ ելլելը ինչ վնասներ ունի ,, :

### ՀԱՆԵԼՈՒԿ

ԱՆԿԵՆԴԱՆ կենդանատուն
Եկեալ մեզ հիւր յառաւօտուն,
Զոր ընկալաք սիրով 'ի տուն.
Տանըն չափով եկաց կանգուն :

ՕԳՈՍՏՈՍԻ հանելուկն էր Կրակարան 1 . երկու կառուցներն են կրակահան երկաթը և քարը . մի-ջին մեռածն է Աբեթը 2 . արիւնն է Կայծերը . բա-րեխօս ծերուկն ալ դեղնած Ծծմբերը 3 է :

1 Չախմախ : 2 Գավ : 3 Քիպրիթ :